ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 օգոստոսի 2005 թվականի N 1596-Ն

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԹՎԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրման կենտրոնների հավատարմագրման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ա. Մարգարյան**

Հավելված
ՀՀ կառավարության 2005 թվականի
օգոստոսի 4-ի N 1596-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԹՎԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրման կենտրոնների (այսուհետ՝ հավաստագրման կենտրոն) հավատարմագրման կարգը:

2. Հավատարմագրումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմինը (այսուհետ՝ լիազոր մարմին):

II. ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

3. Հավաստագրման կենտրոնի հավատարմագրման համար հիմք են ծառայում հավաստագրման կենտրոնի կողմից տրամադրվող էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրերի, այդ հավաստագրերին համապատասխանող էլեկտրոնային թվային ստորագրությունների ստեղծման ապարատային և (կամ) ծրագրային միջոցների ու իր կողմից մատուցվող էլեկտրոնային թվային ստորագրությունների հետ կապված այլ ծառայությունների՝ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած չափանիշներին համապատասխանությունը հավաստող սերտիֆիկատները՝ տրված Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիազոր մարմնի կողմից միակողմանիորեն կամ երկկողմանիորեն ճանաչված տեղական կամ միջազգային սերտիֆիկացնող մարմնի կողմից:

4. Հավաստագրման կենտրոնը կարող է հավատարմագրվել՝

1) լիազոր մարմնի կողմից ճանաչման կարգով, եթե լիազոր մարմնին հայտնի են հավաստագրման կենտրոնի մասին սույն կարգի 3-րդ կետում նշված հիմքերը.

2) հավաստագրման կենտրոնի կողմից լիազոր մարմնին դիմելու կարգով, եթե դիմումին կից ներկայացվում են սույն կարգի 3-րդ կետում նշված հիմքերը:

5. Լիազոր մարմինն անհրաժեշտ հիմքերի առկայության դեպքում հավատարմագրում է հավաստագրման կենտրոնը և կատարում համապատասխան գրառում հավատարմագրված հավաստագրման կենտրոնների մատյանում (ռեգիստրում), ինչի մասին տեղեկացնում է

հավաստագրման կենտրոնին:

6. Սույն կարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված հավատարմագրումը մերժելու հիմք կարող է լինել հավաստագրման կենտրոնի կողմից կեղծ հիմքեր ներկայացնելը, որի մասին լիազոր մարմինը գրավոր տեղեկացնում է հավաստագրման կենտրոնին՝ համապատասխան հիմնավորմամբ:

7. Հավատարմագրված հավաստագրման կենտրոնների կամ այլ շահագրգիռ անձանց կողմից համապատասխան դիմումի առկայության դեպքում լիազոր մարմինը տրամադրում է հավաստագրման կենտրոնի հավատարմագրման մասին տեղեկանք:

III. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼԸ

8. Լիազոր մարմինը կարող է հավաստագրման կենտրոնին դատական կարգով զրկել հավատարմագրումից, եթե վերահսկման ընթացքում լիազոր մարմնի կողմից բացահայտվել են հավաստագրման կենտրոնի տրամադրած էլեկտրոնային թվային ստորագրությունների հավաստագրերի, դրանց համապատասխանող էլեկտրոնային թվային ստորագրությունների ստեղծման ապարատային և (կամ) ծրագրային միջոցների ու էլեկտրոնային թվային ստորագրությունների հետ կապված՝ մատուցվող այլ ծառայությունների անհամապատասխանություններ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և (կամ) սերտիֆիկատներում նշված չափանիշներին:

(Հավելվածը խմբ. 08.10.08 N 1157-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար **Մ. Թոփուզյան**